

Մ Ա Ս Ի - Բ

Հ ա ր կ ա ք յ ո ջ ե տ ա յ ի ն ք ա ղ ա ք ա կ ա ն ո թ յ ո լ ն

Երկարաժամկետ և միջնաժամկետ հարկաբյուջետային սկզբունքները

Հարկաբյուջետային հիմնական ցուցանիշների (եկամուտների, ծախսերի, բյուջետային դեֆիցիտի և պարտքերի) հրապարակումը արտացոլում է Հայաստանի Հանրապետության կառավարության պատրաստակամությունը հարկաբյուջետային քաղաքականության թափանցիկությունն ապահովելու և այդ բնագավառում հեռահար մոտեցում կիրառելու առումով: Մասնավորապես, կառավարությունը հանձն է առնում համակշռել սոցիալական և այլ առաջնահերթ ծախսեր կատարելու անհրաժեշտությունը կայուն հարկաբյուջետային քաղաքականությունն ապահովելու անհրաժեշտության հետ՝ ժամանակի ընթացքում պարտքերի կուտակում թույլ չտալու նպատակով:

Ընդունելով կայուն հարկաբյուջետային քաղաքականության անհրաժեշտությունը՝ ՀՀ կառավարությունը մշակել է երկարաժամկետ հարկաբյուջետային սկզբունքներ, որոնք ամրագրված են ՀՀ կառավարության 2003 թվականի օգոստոսի 8-ի N 994-Ն որոշմամբ հաստատված Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրում: ՀՀ 2009-2011թթ միջնաժամկետ ծախսային ծրագրի (այսուհետ՝ ՄԺԾԾ) և ՀՀ 2009 թվականի պետական բյուջեի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) մշակման ընթացքում ՀՀ կառավարությունն առաջնորդվել է նշված երկարաժամկետ հարկաբյուջետային սկզբունքներով: Դրանք նաև հիմք կծառայեն ՀՀ կառավարության ընթացիկ քաղաքականությունների և երկարաժամկետ նպատակների համաձայնեցվածությունը գնահատելու համար:

Ստորև բերված աղյուսակ 1.1-ում ներկայացված են ՀՀ կառավարության միջնաժամկետ հարկաբյուջետային քաղաքականությունը արտացոլող ամփոփ ցուցանիշները¹:

¹ Տվյալների համադրելիությունն ապահովելու նպատակով 2007թ ցուցանիշները բերված են 2008թ-ից հանրապետությունում ներդրվող ՊՖՎ (GFS) -2001 նոր դասակարգման համաձայն:

Աղյուսակ 1. 1 2007-2009թթ հարկաբյուջետային ամփոփ ցուցանիշները

Ցուցանիշներ	2007թ փաստացի	2008 ծրագիր ²	2009թ նախագիծ
Ա. Արտահայտված մլրդ դրամով			
1. Ընդամենը եկամուտներ	657.5	746.0	905.4
2. Ընդամենը ծախսեր	678.4	822.0	945.4
այդ թվում՝			
- ընթացիկ ծախսեր	501.7	655.1	768.4
- ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնություններ	176.7	167.0	177.0
որից՝			
ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսեր (կապիտալ ծախսեր)	195.8	175.0	190.3
ոչ ֆինանսական ակտիվների օտարումից մուտքեր	-19.1	-8.0	-13.3
3. Դեֆիցիտ (պակասուրդ)	21.1	76.0	40.0
Բ. Արտահայտված ՀՆԱ-ի նկատմամբ %-ով			
1. Ընդամենը եկամուտներ	20.9	21.2	21.7
որից՝			
2. Ընդամենը ծախսեր	21.5	23.3	22.7
այդ թվում՝			
- ընթացիկ ծախսեր	16.0	18.6	18.4
- ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնություններ	5.6	4.8	4.3
որից՝			
ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսեր (կապիտալ ծախսեր)	6.2	5.0	4.6
ոչ ֆինանսական ակտիվների օտարումից մուտքեր	-0.6	-0.2	-0.3
3. Դեֆիցիտ (պակասուրդ)	0.6	2.1	1.0
Անվանական ՀՆԱ (մլրդ դրամ)	3,148.7	3,520.0	4,169.0

Կարճաժամկետ և միջնաժամկետ հարկաբյուջետային ցուցանիշները

Հիմք ընդունելով ՀՆԱ-ի 21.7 %-ի չափով կանխատեսված ՀՀ 2009 թվականի պետական բյուջեի եկամուտների մակարդակը և ելնելով ՀՆԱ-ի 1.0 %-ի չափով դեֆիցիտի ֆինանսավորման հնարավորություններից, ՀՀ կառավարությունը ծրագրում է ապահովել ծախսերի մակարդակը ՀՆԱ-ի 22.7 %-ի կամ 945.4 մլրդ դրամի չափով:

² ՀՀ 2008 թվականի պետական բյուջեով հաստատված հարկաբյուջետային ցուցանիշները և դրանց հաշվարկների հիմքում դրված մակրոտնտեսական ցուցանիշներ:

Նշված պայմաններում դրական միտումները կշարունակվեն նաև պետական պարտքի բնագավառում: Ոչ արտոնյալ վարկերի՝ արդեն իսկ վերաձևակերպված լինելու պայմաններում արտաքին պարտքի անընդհատ ազդեցություն չի ունենա երկրի վճարունակության վրա:

ՀՀ 2009 թվականի պետական բյուջեի նախագծով ծրագրավորվող հարկաբյուջետային ցուցանիշները ընդհանուր առմամբ համահունչ են երկարաժամկետ հարկաբյուջետային սկզբունքներին: Նախագծով նախատեսված և ՄԺԾԾ հաշվարկների հիմքում դրված բյուջետային եկամուտները տարբերվում են հիմնականում պաշտոնական դրամաշնորհների և այլ եկամուտների գծով նախատեսված գումարներով:

Պաշտոնական դրամաշնորհների գծով ՄԺԾԾ-ով նախատեսված 35.6 մլրդ դրամի և Նախագծով առաջարկվող 36.2 մլրդ դրամ գումարների միջև 0.56 մլրդ դրամ տարբերությունը պայմանավորված է ինչպես դրամաշնորհների կառուցվածքի, այնպես էլ հաշվարկների հիմքում դրված 1 եվրոյի և 1 ԱՄՆ դոլարի փոխարժեքի փոփոխություններով (նշված ցուցանիշները ՄԺԾԾ-ի հաշվարկներում կազմել են համապատասխանաբար 476.86 և 306.82 դրամ, Նախագծում՝ 442.89 և 302.44 դրամ):

Այլ եկամուտների գծով ՄԺԾԾ-ի շրջանակներում ծրագրված 11.3 մլրդ դրամ մուտքերի նկատմամբ Նախագծով նախատեսված 14.8 մլրդ դրամի տարբերությունը հիմնականում պայմանավորված է ՀՀ կենտրոնական բանկում ավանդադրվող ժամանակավորապես ազատ բյուջետային միջոցների դիմաց վճարվող տոկոսավճարների գծով ծրագրված մուտքերով: Հաշվարկների հիմքում դրված ընթացիկ տարվա հունվար-հուլիս ամիսների փաստացի հավաքագրումների միտումներով, ինչպես նաև հաշվարկներում կիրառվող տարադրամի միջին տարեկան դրամային փոխարժեքի վերը նշված փոփոխությամբ: Արդյունքում, ՄԺԾԾ-ի շրջանակներում ծրագրվածի նկատմամբ այլ եկամուտների գծով Նախագծով նախատեսվել է 3.5 մլրդ դրամի չափով ավելի մուտքեր:

ՀՀ 2009 թվականի պետական բյուջեի նախագծով առաջարկվող բյուջետային եկամուտների ընդհանուր գումարը ՄԺԾԾ-ով նախատեսվածի դիմաց ավելացել է 4.7 մլրդ դրամով կամ 0.52 %-ով, իսկ ծախսերը նվազել են 1.1 մլրդ դրամով կամ 0.12 %-ով: Վերը նշված փոփոխությունները բնականաբար ազդեցություն ունեցան նաև 2009 թվականի բյուջետային դեֆիցիտի մեծության վրա (վերջինիս գումարը ՄԺԾԾ-ով նախատեսվածի դիմաց նվազել է 5.8 մլրդ դրամով):